



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

6 հունիսի 2016Ն.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Համլետ Ամիրջյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Համլետ Ամիրջյանը 16.05.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան խնդրելով՝ «գործին մասնակից չդարձված անձի կողմից դատական ակտը բողոքարկելու իրավունքը, ինչպես նաև նույն անձի կողմից առաջին ատյանի դատարանի եւ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերն ըստ դատական ատյանների բողոքարկելու իրավունքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասում, 223-րդ հոդվածում եւ 229-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն եւ հստակ կերպով սահմանված չլինելը, եւ, դրա արդյունքում (պատճառով) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասի,

223-րդ հոդվածի եւ 229-րդ հոդվածի 3-րդ մասի ձեւավորված իրավակիրառական պրակտիկան՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած եւ օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պարագայում գործին մասնակից չդարձված անձի կողմից առաջին ատյանի դատարանի կայացրած գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննիչ քաղաքացիական դատարան բողոքարկելու մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի եւ 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներն իր նկատմամբ ստեղծել են իրավական անհաղթահարելի իրավիճակներ, քանի որ դրանցով հստակ սահմանված չեն գործին մասնակից չդարձված անձի՝ առաջին ատյանի դատարանի եւ վերաքննիչ դատարանի դատական ակտերն ըստ դատական ատյանների բողոքարկելու կարգը:

Ըստ դիմողի՝ գործին մասնակից չդարձված անձի կողմից դատական ակտը բողոքարկելու իրավունքը, ինչպես նաեւ առաջին ատյանի դատարանի եւ վերաքննիչ դատարանի դատական ակտերն ըստ դատական ատյանների բողոքարկելու իրավունքը վիճարկվող դրույթներում ուղղակիորեն եւ հստակ սահմանված չեն, ինչը հնարավորություն է տալիս ՀՀ վճռաբեկ դատարանին՝ մի դեպքում՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, իսկ մեկ այլ դեպքում՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու եղանակով այն վարույթ չընդունել:

Դիմողը կարծում է, որ իրավական կատարյալ անորոշություն կառաջանա նաեւ այն դեպքում, եթե վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող ակտը մի մասով թողնվի օրինական ուժի մեջ, իսկ մի մասով բեկանվի եւ փոփոխվի եւ բեկանված մասով կայացվի գործն ըստ էության լուծող դատական ակտ: Նման պարագայում, ըստ վճռաբեկ դատարանի կողմից ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի, ստացվում է, որ գործին մասնակից չդարձված անձի կողմից առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի չբեկանված մասը պետք է բողոքարկվի վերաքննիչ դատարան, իսկ նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից բեկանված, փոփոխված եւ գործն ըստ էության լուծող դատական ակտի մի մասը պետք է բողոքարկվի վճռաբեկ դատարան:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է ընդունման՝ մասնակիորեն:

2.1. Դիմումին կից ներկայացված դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ, 223-րդ հոդվածի 2-րդ եւ 229-րդ հոդվածի 3-րդ մասերը դիմողի նկատմամբ չեն կիրառվել: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի որոշում (ՄԴՈ-1220 16.06.2015թ.): Դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից վիճարկվող դրույթ/ներ/ի կիրառումը՝ որպես անհատական դիմումին ներկայացվող պայման, ի թիվս այլնի, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ սահմանադրական դատարանն իր 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Հետեւաբար, այս առումով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով, դատական կազմը գտնում է, որ նշյալ դրույթների մասով անհատական դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի կողմից գործի քննության ընդունումը ենթակա է մերժման:

2.2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է վճարեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց սպառիչ ցանկը, որում ներառված չէ գործին մասնակից չդարձված անձը՝ որպես առաձին սուբյեկտ: Հարկ ենք համարում նշել, որ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածում, ի թիվս այլնի, 2000 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-71 ՀՀ օրենքով շարադրված խմբագրությամբ ներառվել էր նաև գործին մասնակից չդարձված անձը՝ որպես վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտ: Այս իրավակարգավորումը գործել է մինչև 2008 թվականի հունվարի 1-ը: Դրանից հետո ուժի մեջ է մտել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-277-Ն ՀՀ օրենքը, որի 75-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկում չնախատեսվեց գործին մասնակից չդարձված անձը: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում» վերտառությամբ 5-րդ բաժնի 229-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու ժամկետները գործին մասնակից չդարձված անձանց համար այն պարագայում, երբ նույն գլխի 223-րդ հոդվածը չի նախատեսում գործին մասնակից չդարձված անձանց՝ որպես վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներ: Այս համատեքստում դատական կազմն ընդգծում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վարույթը վերաքննիչ դատարանում» վերտառությամբ 4-րդ բաժնի 205-րդ հոդվածը նախատեսում է գործին մասնակից չդարձված անձանց՝ որպես վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներ, իսկ 207-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է վերջիններիս կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետները:

Բացի դրանից, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 03.12.2010 թվականի՝ մեկ այլ գործով կայացված որոշմամբ բավարարվել է գործին մասնակից չդարձված անձի՝ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու մասին պահանջը: Ընդ որում, որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանը հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասին՝ բավարարել է վճռաբեկ բողոքը՝ առանց շեշտադրելու նույն օրենսգրքի 224-րդ հոդվածը, ինչի վրա հիմնվելով եւ վկայակոչելով նաև 223-րդ հոդվածը՝ սույն գործի շրջանակներում առանց քննության է թողել վճռաբեկ բողոքը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում Սահմանադրական դատարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ բոլոր դեպքե-

րում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Ջարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի առաջ քաշած փաստարկներն առ այն, որ՝ «...առաջին աստիճանի դատարանի եւ վերաքննիչ դատարանի դատական ակտերն ըստ դատական աստիճանների բողոքարկելու իրավունքը վիճարկվող դրույթներում ուղղակիորեն եւ հստակ սահմանված չեն, ինչը հնարավորություն է տալիս ՀՀ վճռաբեկ դատարանին մի դեպքում, ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, իսկ մեկ այլ դեպքում՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու եղանակով այն վարույթ չընդունել...» եւ «... գործին մասնակից չդարձված անձի կողմից առաջին աստիճանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի չբեկանված մասը պետք է բողոքարկվի վերաքննիչ դատարան, իսկ նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից բեկանված, փոփոխված եւ գործն ըստ էության լուծող դատական ակտի մի մասը պետք է բողոքարկվի վճռաբեկ դատարան...», վկայում են այն մասին, որ առկա իրավակարգավորմամբ պայմանավորված, մասնավորապես, վճռաբեկ բողոք բերելու ի-

րավունք ունեցող սուբյեկտների շարքում գործին մասնակից չդարձված անձանց չնախատեսելը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ որպես վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքի ընտրության չափորոշիչ կիրառելը, ստեղծվել է իրավակիրառական հակասական պրակտիկա, որի արդյունքում չի ապահովվում գործին մասնակից չդարձված անձանց՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ դատական կազմը գտնում է, որ առկա չեն դիմումի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ գործի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշումը,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Համլետ Ամիրյանի անհատական դիմումի քննության ընդունումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, 223-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի մասով եւ 229-րդ հոդվածի 3-րդ մասի մասով մերժել:

2. «Համլետ Ամիրջանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

6 հունիսի 2016 թ. ԻՅ ԿԸ
ԵՊՀ ԻՅ/2-14